բուսաղէմի և Պոլսոյ պատրիարքարանները պարագայից և պիտոյից համեմատ կը գրեն և կը հրատարակեն թէ գրոց և թէ աշխարհիկ բարբառներով, ժամանակին թողով որ լուծէ գրաբարի կամ աշխարհաբարի նախապատուութեան և կարեւորութեան խնդիրն։ Եւ ընդ ամին քաջ համոզուած են, որ Արշալուսոյ նման անհրաժեշտ փաստաբաններն ու ջատագովները աւելի կը վտանգեն նախնի գրաւոր լեզուի յարգն ու պատիւն, քան թէ այն համեստ և գործունեի հոյակերտ բանասէրները, որոնք երկու բարբառներն եւս կ'ուսումնասիրեն, կը հետազօտեն, կը մշակեն, համոզուած լինելով՝ որ սոյն եղանակաւ ոչ գրաբարն և ոչ աշխարհիկն կը վտանգուին, այլ երկոցունց ուսումնասիրութենէն և մշակութենէն՝ կը կազմակերպի մի նոր և ճոխ լեզու հայկական։

Արդ՝ սոյն հակիրճ դիտողութիւնն բաւական համարելով՝ բարեկամաբար յորդոր կը կարդամք Արշալուսոյ, որ անգիտաբար չընեռուի այնպիսի խնդրոց մէջ, որոց վերայ լիովին ծանօթութիւն և հաստատուն հմտութիւն չունի։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Քաղաքիս մէջ Պարսկական Հիւպատոսարան հաստատուեցաւ և նոր Հիւպատոս գալով արդէն սկսած է վարել իւր պաշտօնն։

— Բ. Դրանէն Ս. Ցեղեաց և մանաւանդ Բեթղէհեմի խնդրոյն նկատմամբ նշանակուած քննիչն քաղաքս ժամանեց եւ արդէն ձեռնարկած է քննութեան, բայց արդիւնքն անյայտ է տակաւին, որովհետև պաշտօնական կերպիւ ուղղակի Բ. Դրան կը հաղորդուին։

— Բեթղէհեմի մէջ հեռագրական կայարան հաստատուեցաւ և արդէն կը շարունակի հաղորդագրութիւնն քաղաքիս հեռագրատան հետ։

— Բեթղէհեմի զօրանոցի հիմնարկութիւնն սկսուեցաւ, և որովհետև կից էր մեր Գերեզմանատան, Ս. Աթոռոյս կողմէն ամեն հնարաւոր միջոցներ գործ դրուեցան, որպէս զի մեր իրաւունքէն մեծ մաս մի չը զոհուի յիշեալ շինութեան։ Յոյնք, որոց գերեզմանատան նոյնպէս յարակից է հիմնարկեալ զօրանոցն, անտարբեր դիրք բռնեցին ներկայ խնդրոյս մէջ եւ շարժառիթն անծանօթ է տակաւին։ Եթէ տարաձուած զրոյցներուն հաւատ ընծայենք, այնպէս կը խօսուի Հասարակութեան մէջ, որպէս թէ շինուելէն զկնի՝ Յոյնք պիտի գնեն յիշեալ շէնքն։

— Ս. Աթոռոյս Ընդհանուր Ժողովն բաւական ժամանակէն ի վեր շարունակ նիստեր կ'ընէ իւր Եկեղեցական բազմամեայ Հաշիւներն եւ ապագայ տարւոյն Հաշուէկշիռն պատրաստելու, Կանոնական Ծրագրոյ խմբագրութիւնն վերադիտելու, Տեսչական պարտաւորութեանց սահմաններն գծելու։ և կարեւոր ժողովներն վերանորոգելու։ Կը յուսանք թէ սակաւ ժամանակէն զկնի Ս. Աթոռոյս Ընդհանուր և Մասնաւոր Ժողովոց աշխատութեան արդիւնքն կը հրատարակուի ի գիտութիւն համօրէն Ազգայնոց։

---

digitised by A.R.A.R.@